Հայ գրականության օլիմպիադայի

հանրապետական փուլի հարցաշարեր

XII դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

1. Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի գրության շարժառիթները, պատմական հիմքերը, արդիականությունը։ Հայրենասիրության երկու ըմբռնում։ Համամի՞տ ես Վասակի կերպարի դեմիրճյանական մեկնաբանությանը։ Հիմնավորի՛ր։ 5 մ.

2. Հովհաննես Շիրազի համաժողովրդական փառքը։ «Հուշարձան մայրիկիս» ժողովածուն։ Մոր կերպարի բազմակողմանի բացահայտումը (վերլուծել 3-4 բանաստեղծություն)։ Գրել 2 քառատող որևէ բանաստեղծությունից։ 5 մ.

3. Պարույր Սևակը՝ պոեզիայի բարենորոգիչ։ «Մարդը ափի մեջ» ժողովածուն։ Ի՞նչ են հուշում շարքի բանաստեղծությունների վերնագրերը։ Վերլուծի՛ր՝

Խոստանում եմ Լինել ո՛չ թե հարկհավաքը,
Այլ զավա՛կը դժվար դարի, Ինչպես նրան՝ և ինքս ինձ
Հավետ մնալ հավատարիմ, - Թեկուզ կրել և մահացու ցավը դարի
Թեկուզ նույնիսկ կյանք արժենա դավը դարի,
Մեռնելիս էլ ո՛չ թե տանել , այլ կտակել լավը դարի…
Խոստանում եմ բաց ճակատով զուր չխփվել հաստ պատերին։
Ինչի՞ համար. էլի՛ պատը կմնա պատ, Կպակասի մի լավ ճակատ։

5 մ.

4. Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը։ Բնության քնարերգություն և բնապաշտություն («Քարափների երգը», «Քարափը», «Անձրև», «Անտառում», «Որոտանի եզերքին»)։ Ի՞նչ ես զգում Սահյան կարդալիս։

5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան